

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԹԱԳԵՆԱՑԻ (200—258)

Հյուսիսային Աֆրիկայի Եկեղեցին թեև հիմնադրվել է համեմատաբար ավելի ուշ շրջանում, Բ դարի սկզբներին, բայց նախկին քրիստոնեական գրականությանն ու աստվածաբանությանը նրա բերած ներդրումը համարվում է ավելի մեծ, քան Հռոմի Եկեղեցունը:

Աֆրիկայի Եկեղեցին նախանիկիական շրջանում Լատին Եկեղեցուն և ընդհանուր Եկեղեցու գրականության և աստվածաբանության համար տվել է երկու ինքնատիպ մտածողներ, ինչպիսիք եղել են Գվինտոս Սեպտիմոս Ֆլորենս Տերտուղիանոսը (155—220) և Տասկիոս Կեկելիոս Կիպրիանոսը[1]:

Հյուսիսային Աֆրիկայում, ըստ ավանդության, Ավետարանի քարոզչությունը կապվում է Հռոմի Եկեղեցու առաքելության հետ, թեև այդ մասին ճշգրիտ տեղեկություններ չկան:

Հռոմի եկեղեցական կյանքում մինչև Գ դարի առաջին հիսնամյակը կատարվող մտավոր, կրոնական, կարգապահական, ծիսապաշտական, մշակութային բոլոր հարցերը, իրենց անմիջական արձագանքը գտնում էին Կարթագենա քաղաքում: Հռոմեական այդ գավառի ողջ քրիստոնյաները իրենց ղեկավարության համար նայում էին դեպի Հռոմ և հաճախակի հարաբերություններ էին պահպանում կայսրության մայրաքաղաքի հետ և խորապես հետաքրքրվում՝ այնտեղ պատահած բոլոր իրադարձություններով: Վերոհիշյալ անմիջական այդ հարաբերությունների լավագույն վկայությունն էր հանդիսանում աֆրիկյան գրողների մատենագրական վաստակը[2]:

Ինչպես Հռոմում, այնպես էլ Կարթագենայում Ավետարանի քարոզությունը կատարվել է նախապես հունարեն լեզվով: Դրա պայծառ ապացույցն այն է, որ Տերտուղիանոսի առաջին չորս գրքերը գրվել են հունարենով:

Բ դարի վերջերին է, որ Կարթագենայում կատարվել է լատիներեն լեզվով Նոր Կտակարանի մասնակի մի թարգմանություն:

Գ դարի առաջին քառորդին Տերտուղիանոսը վկայում է Աստվածաշնչի ամբողջական լատիներեն լեզվով թարգմանության մասին: 250 թվականին Աֆրիկյան Եկեղեցին արդեն գործածում էր Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը, որպես կանոնական, ընդունված թարգմանություն[3]: Կիպրիանոսը իր հերթին մատենագրական իր երկերի մեջ օգտագործում էր

---

[1] Ընդհանուր եկեղեցական պատմություն, **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, 1908, Մայր Աթոռ, էջ 133—138:

[2] **Johannes Quasten**, Patrology, vol. II, էջ 243,

[3] **Quasten**, նույնը, էջ 244:

Աստվածաշնչի այդ լատիներեն թարգմանությունը:

Կարթագենայի Եկեղեցում ծիսապաշտական լեզուն ևս նախապես եղել է հունարենը: Հռոմի Եկեղեցուց առաջ, Կարթագենայում է, որ ծիսապաշտական լեզուն փոխարինվում է լատիներենով, Գ դարի սկզբներին:

Հյուսիսային Աֆրիկայի Եկեղեցին էլ իր գոյության առաջին իսկ օրերից ենթարկվել է պետական դաժան և արյունոտ հալածանքների: Կարթագենայի Եկեղեցու ծոցում միաժամանակ առաջ են եկել մոնտանական, վալենտինյան, մարկիոնական բազում հերետիկոսական հակաճառություններ[4], որոնք խանգարել են Եկեղեցու ներքին միությունը, պառակտել՝ նրա խաղաղ կյանքը, արգելակել Եկեղեցու աճումն ու ամրապնդումը:

Կարթագենայում քրիստոնեության արագ տարածումը գինն էր անհամար մարտիրոսությունների, տառապանքների և թափված անհաշիվ արյունահեղությունների:

Աֆրիկյան Եկեղեցու առաջին մեծ ու արդյունաշատ մատենագիրը Տերտուղիանոսն է: Դժբախտաբար նա մեզ չի ներկայանում ընդհանրական Եկեղեցու սուրբ Հայրապետների լուսապսակով, «թեև մոնտանական, նա մեծ ազդեցություն է գործել եկեղեցական աստվածաբանության վրա... Նրա ամենագլխավոր նշանակությունն այն է, որ լատիներենը քրիստոնեական գրականության մեջ մտցնելով եկեղեցական լատինական գրականության հայրը դարձավ»[5]:

«Ս. Օգոստինոսից հետո Տերտուղիանոսը ամենակարևոր և ինքնատիպ եկեղեցական հեղինակն է, որ լատիներեն է գրել»[6]:

Ըստ Ս. Օգոստինոսի վկայությանը, «Տերտուղիանոսը վերջը մոնտանականներից բաժանվել է»:

Աֆրիկյան Եկեղեցու երկրորդ մեծ և ուղղափառ աստվածաբանը Ս. Կիպրիանոս Կարթագենացին է, բոլորովին տարբեր մի անհատականություն Տերտուղիանոսից: Կիպրիանոսը համարվում է քրիստոնեական հերոսամտության, ազնվության, հեզության, գութի և սիրո մարմնացում: Նա ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ համարվում է «պարծանք քրիստոնէից»[8]:

Կիպրիանոսը եղել է աշակերտը Տերտուղիանոսի: Վկայություններ կան այն մասին, որ Կիպրիանոսը ոչ մի օր չէր անցնում ա-

---

[4] Մոնտանականությունը Բ դարի կեսերին Փյուգիայում հառաջ եկած հերետիկոսական «ֆանտաստիկական» մի շարժում էր, որը քարոզում էր, թե մոտալուտ է Քրիստոսի երկրորդ գալուստը աշխարհ, և երկնային Երուսաղեմը իջնելու է Փյուգիայի Պեպուզա քաղաքում:

Շարժման ղեկավարը նախկին հեթանոս քուրմ Մոնտանոսն էր, որը իրեն համարում էր Հովհաննու Ավետարանում խոստացված Մխիթարիչը: Նա իր հետևորդներին քարոզում էր, որ պետք է այս աշխարհից դուրս գալ և խմբովին գնալ դիմավորելու Փրկչին: Նա քարոզում էր հրաժարվել ամուսնական կյանքից, քաջալերում էր ամուսնաթողությունը, ջատագովում՝ կուսությունը:

Եկեղեցին ճզոլում էր հակաքրիստոնեական այս շարժումը: Նրա դեմ պայքարում էին Բ—Գ դարերի ջատագովները, օրինակ՝ Լիոնի Սուրբ Իրենեոս եպիսկոպոսը, Անտիոքի հայրապետները: 190 թվականին այդ շարժումը արդեն նահանջի մեջ էր, և ոչ մի չափով վտանգ չէր ներկայացնում Եկեղեցու համար:

Տվյալ ժամանակաշրջանի հերետիկոսական երկրորդ շարժումը, որի դեմ գրել է Կղեմես Ալեքսանդրացի հայրապետը, վալենտինյան աղանդավորությունն էր: Շարժումը սկիզբ էր առել Եգիպտոսում: Վալենտիանոսը սովորել էր Ալեքսանդրիայի դպրոցում, ապա գնացել Հռոմ, ուր հետևորդներ է հավաքագրել, հիմնել իր «եկեղեցին», բացել՝ դպրոց:

Սույն հերետիկոսական շարժումը նույնպես երկար չի ապրել: Նրա դեմ հակաճառություններ են գրել Ս. Իրենեոսը, Հիպպոլիտը:

Հերետիկոսական այս շարժումները առավել կամ նվազ չափով գնոստիկյան աղանդավորական շարժման ազդեցության ներքո էին:

Ժամանակի վտանգավոր հերետիկոսական շարժում էր նաև Մարկիոնի աղանդը: Մարկիոնը նախկին գնոստիկյան էր: Ծնվել էր Պոնտոսի Սինոպիա քաղաքում, և եպիսկոպոսի զավակ էր: Բ դարի սկզբում նրա եպիսկոպոս հայրը վտնդում է նրան հորենական հարկից և եկեղեցուց, որպես մոլորյալի: Նա գնում է Հռոմ իր մոլար վարդապետությունը քարոզելու: Մարկիոնի դեմ են գրել նաև Եկեղեցու նշանավոր Հայրերը, որոնք նրան անվանել են «սատանայի առաջին ծնունդը» (Ս. Իրենեոս): Մարկիոնը մերժում էր Հին Կտակարանը: Քրիստոսի Աստվածանայտնությունը համարում էր «առ աչօք», երևակայական մի բան, բան թե իրողություն: Նա այդ մտքով էլ մերժում էր Քրիստոսի խաչելությունը՝ որպես «առ աչօք» մի երևույթ: Սերժում էր Եկեղեցու խորհուրդները, և ընդունում էր երկու սկիզբ, երկու աստվածություն:

[5] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 136:

[6] **Quasten**, նույնը, էջ 247:

[7] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 133:

[8] Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին տօնացոյցի Եկեղեցւոյ Հայաստանեայց, հատոր Դ, 1813, Վենետիկ, էջ 68—69:

ռանց որևէ բան ընթերցելու Տերտուղիանոսից:

Կիպրիանոսի կյանքի, առաքելական-քարոզչական գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ կան նրա մատենագրական գործերի և մանավանդ նամակների մեջ: Նրա աշակերտ Պոնտիոս սարկավագը գրել է նրա «Վարք»-ը. նա մեծ սրբին ընկերակցել է մինչև նրա աքսորը և ականատես է եղել նրա նահատակությանը: Պոնտիոսը հիացումով լեցված մեծ նահատակի և վկայի հանդեպ, իր «Վարք»-ի մեջ գրել է նաև սրտառուչ մի մահախոսական-ներբող, որպեսզի Կիպրիանոսի «անմահ հիշատակն ու անունը դարեր ապրեն քրիստոնյա հաջորդ սերունդների հիշողության մեջ»[9]:

Կիպրիանոսը ծնվել է 200 թվականին Կարթագենայում, որը համարվում էր կենտրոնը արևմտյան աֆրիկյան քրիստոնեության, այժմյան Թունիզի նշանավոր ու հին քաղաքներից մեկը, բարեկեցիկ, կրթված հեթանոս պատրիկյան ընտանեկան հարկի տակ: Նա խորապես ուսումնասիրում է հռետորական արվեստն ու օրենագիտությունը և երկար ժամանակ զբաղվում է հռետորական արվեստի դասախոսությամբ և փաստաբանությամբ: Նա Կարթագենայում հռչակվել է իր ընտրած մասնագիտությունների մեջ որպես իրավաբան իր փայլուն ձիրքերով:

Նրա օրով Կարթագենայում մոլեգնում էր 250 թվականին Դեկոս կայսրի (250—253) հալածանքը: Բազմահազար քրիստոնյաներ արիությամբ և համարձակությամբ ընդունում էին հանուն իրենց հավատքի և քրիստոնեական ըմբռնումների նահատակության փառապսակը: Այս հանգամանքը, այսինքն մահվան հանդեպ հավատացյալների արհամարհանքը հոգեպես ցնցում է Կիպրիանոսի բարի և ազնիվ սիրտը: Նա հասկանում է, որ բիրտ ուժից վեր կա մի նոր բարոյական քաջություն, որը բխում է քրիստոնյաների հավատքից ու բարոյականից: Կիպրիանոսին խորապես զզվեցնում են նաև Կարթագենայում հանրային անբարոյականությունը ու վատ բարքերը, պետական, վարչական մարմինների կաշառակերությունները ու բռնությունները, և այդ բոլորը խորվում է նրա հոգին և նա փընտրում է կյանքում ավելի բարձր ու մարդկային մի բարոյականություն, մի ճշմարտություն: Այդ նպատակով ճանապարհորդություններ է կատարում Եգիպտոս, Աթենք, Անտիոք: Եվ մի օր, աստվածային շընորհի կամ երկնային ազդեցությամբ, որոշում է քրիստոնյա դառնալ: Այդ գործի մեջ Կիպրիանոսին մեծ օգնություն է ցույց տալիս Տասիլիոս Ցիցիլիանոս երեցը: Այդպես Կարթագենայի եպիսկոպոսը Կիպրիանոսին քրիստոնյա է մկրտում. «Եւ նորոգեցաւ ի նոր մարդ ըստ Աստուծոյ»[10]: 246 թվականին Կիպրիանոսը քահանա է ձեռնադրվում և հոբենական իր ողջ հարստությունը բաժանում է աղքատներին: 249 թվականին Կարթագենայի հավատացյալ ժողովուրդը նրան ընտրում է քաղաքի եպիսկոպոս: Նույն թվականին, Դեկոս կայսրի հալածանքների ժամանակ ձերբակալվում է, դատվում և աքսորվում: Նա մինչև 251 թվականի Զատիկը թաքնված է ապրում, «մինչև անցցէ բարկութիւն կայսեր», բայց իր նամակագրությամբ, հեռակա կարգով իր կապը ամուր է պահում Կարթագենայի իր թեմի հոգևորականության, իր հավատացյալների հետ: Նամակներից մեկում նա գրում է, որ ինքը անձնական ապահովության համար չէ, որ ժամանակավորապես խուսափել է հալածանքներից, այլ եկեղեցու ապահովության համար:

Կիպրիանոսը 258 թվականին Վաղերիանոս կայսրի ժամանակ (253—260) կրկին ձերբակալվում է և իր կյանքը որպես խոստովանող և մարտիրոս, ավարտում է գլխատվելով:

Կիպրիանոսի եպիսկոպոսության ժամանակ քրիստոնեական Եկեղեցին հալածանքների, ծանր փորձությունների մի դառն ժամանակաշրջան է բոլորում: Նման հանգամանքների ներքո, Կարթագենայի եկեղեցական իշխանությունը իր ուշադրությունը կենտրոնացնում է առավելապես «Եկեղեցու գործնական նպատակների, քան հավատի հարցերի վրա», այսինքն «եկեղեցական կարգապահության և կազմակերպության» խնդիրների վրա: Կիպրիանոսը «եկեղեցական-վարչական մի անձնավորություն էր, որ կազմակերպելու մեծ տաղանդներ, բայց միևնույն ժամանակ բարձր քահանայական ինքնագիտակցություն և մանկավարժական խելք: Ամեն տեսակետից գործնական՝ թե իբրև աստվածաբան, թե իբրև գրող և թե իբրև եպիսկոպոս, միևնույն ժամանակ կազմակերպված մի բնավորություն, նա շատ մեծ չափով նպաստել է եպիսկոպոսական հեղինակության բարձրացման: Նրան էին դիմում Գալլիայից, Կապադովկիայից, և ինքն էլ աշխատում էր յուր կարծիքներն ու մտքերը ամենահեռու տեղերն անգամ տարածվեն...

[9] Quasten, նույնը, էջ 340:

[10] Լիակատար վարք և վկայաբանութիւն..., նույնը, էջ 75:

Կիպրիանոսի օրով Եկեղեցին դարձավ քահանայական պետություն, նվիրապետական մի կազմակերպություն ունեցող **փրկության** կամ **դաստիարակության** դպրոց»[11]:

Կիպրիանոսի օրով Կարթագենայի քրիստոնեական Եկեղեցին ապրում է հոգևոր զարգացման և ներքին կազմակերպվածության խոստումնալից մի շրջան:

Սակայն այդ Եկեղեցու ծոցում ևս տիրում էր մեծ հուզում: Դա Դեկիոս կայսրի (250—253) հալածանքների ժամանակ ուրացողներին կամ «անկեալ»-ներին ապաշխարությամբ նորից Եկեղեցու ծոցը ընդունելու կամ չընդունելու հարցն էր: Այդ հարցը հուզում էր ողջ քրիստոնեական Եկեղեցին թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում:

Այդ հարցը միաժամանակ Գ դարում հանդես եկող աղանդավորական շարժումների ուժեղացման և գործունեության պատճառ էր դարձել:

Եվսեբիոս Կեսարացին իր «Պատմութիւն Եկեղեցոյ» աշխատության մեջ վկայում է, որ այդ հարցի առիթով Ալեքսանդրիայի Դիոնեսիոս եպիսկոպոսը 248 թվականին նամակ է գրում Հայաստանի և կամ Մեծ Հայքի հայոց Մեհրուժան Հայրապետին՝ «Վասն ապաշխարութեան» նրա կարծիքը ևս ունենալու համար»[12]:

Հռոմի Եկեղեցին այդ հարցում պահանջում է «խիստ վարվել ուրացողների և ծանր մեղքերի, հատկապես անառակության մեջ ընկնողների հետ՝ բանադրելով նոցա ո՛չ մի պայմանի ներքո կրկին Եկեղեցու գիրկը ընդունելով»[13]:

Կիպրիանոսը ուրացողներին Եկեղեցու գիրկը կրկին ընդունելու հարցում «չկամեցավ շատ առաջ գնալ» և որոշեց «այդ խնդիրը վճռել մի ժողովով, հալածանքներից հետո, իսկ առայժմ միայն հույս տալ զղջացողներին, որ կընդունվեն կրկին կանոնավոր ապաշխարությունից և գործի քննությունից հետո»[14]:

Կիպրիանոսը որպես «գործի մարդ» հետաքրքրվում էր ոչ այնքան աստվածաբանական-հայեցողական կամ դավանաբանական հարցերով, որքան Եկեղեցու ամրապնդման, կարգապահության գործնական խնդիրներով:

Ուրացողների կամ «անկեալ»-ների ընկատմամբ Կիպրիանոսի քրիստոնեական, մարդասիրական վերաբերմունքի մեջ մեծ դեր է խաղում գութի, ներողամտության, ողորմածասիրության սկզբունքը: Կիպրիանոսը շեշտում էր. «Աստված բարեգութ է, ուրեմն Եկեղեցին էլ պարտավոր է այդպես լինել»: Ժամանակի տիրող ոգին կամ սկզբունքը ըստ Կիպրիանոսի այն էր, որ «Արտաքո Եկեղեցու փրկություն չկա»: Հետևաբար ուրացողներին «կրկին Եկեղեցու գիրկը չընդունելը նշանակում էր ընդհանրապես զրկել նոցա փրկությունից»[15]:

Ընդհանուր Եկեղեցու վկայաբանության մեջ հիշվում են երկու Կիպրիանոս Հայրապետներ, երկուսն էլ Գ դարու պատկանող, մին՝ Կարթագենացի, վարդապետ Եկեղեցու, խոստովանող և նահատակ 258-ին, մյուսը՝ Անտիոքացի, նահատակված 285-ին Դիոկղետիանոս կայսրի օրով: Մեր Եկեղեցին կատարում է միայն Կիպրիանոս Կարթագենացու հիշատակը, Սուրբ Հուստիանե կույսին հետ, Վարդավառի երկրորդ Բ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը[16]:

ԿԻՊՐԻԱՆՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կիպրիանոս Հայրապետի մատենագրական վաստակը անմիջականորեն կապվում է նրա հովվական-քարոզչական կյանքի և նրա ապրած ժամանակի եկեղեցական հարցերի հետ: Այս պատճառով նրա մատենագրական գործերը գրվել են մասնավոր առիթներով և հետապնդել եկեղեցական-գործնական նպատակներ: «Նա գործի մարդ է եղել: Հետաքրքրվել է առավելաբար հավատացյալ հոգիների փրկությամբ, քան աստվածաբանական հայեցողությամբ... Նրա գրվածքների լեզուն և ոճը հստակ են, հարթ, հղկված, որոնք իրենց վրա կրում են Աստվածաշնչի բառապաշարի, քերականության և երևակայության խորունկ ազդեցությունը: Միաժամանակ Տերտուղիանոսի հանդեպ նրա ունեցած հիացումը երե-

[11] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը. էջ 175—176:

[12] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Ա հատոր, մասն Ա., Բեյրութ, 1959, էջ 61:

[13] **Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան)**, Նշխարներ ամենահին եկեղեցական հայրերի գրվածքներից, «Արարատ», 1896, համար երկրորդ, էջ 58—59:

[14] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 177—178: «Ոչ անխորհրդաբար ընդունել զանկեալսն և ոչ անգթութեամբ մերժել իսպառ»:

[15] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 180:

[16] **Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան**, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 159—160: **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, Համաքրիստոնեական սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 45: Օրացոյց, Ս. Էջմիածին, 1982, էջ 93—94:

վում է նրա ճառերի վրա: Միջնադարում Կիպրիանոսը ամենից ավելի սիրված ժողովրդական հեղինակներից մեկն էր, և նրա գրվածքները տարածվում էին բազում ձեռագրերով[17]:

Կիպրիանոսի «միջոցով Տերտուղիանոսը արևմտյան կաթոլիկության հայրը դարձավ: Նա մի կողմ թողեց յուր վարժապետի նախնի-քրիստոնեական-մոնտանական կողմը... թանձրացրեց նրա մտածողությունը և այդպիսով դարձրեց նաև կաթոլիկ Եկեղեցու համար գործածելի[18]:

Կիպրիանոս Հայրապետի մատենագրական վաստակի մեջ հիշվում են նրա ճառերը, ներբողյանները և նամականին: Նա ընդհանրական Եկեղեցու պատմության մեջ քաջածանոթ է եղել վերոհիշյալ «գրովք իւրով... Օգնական լինէր հաւատացելոց թղթովք և սպառազինէր զամենեսին ի հանդէս խոստովանութեան և վկայական մահուան»[19]:

Հռոմում և Արևմուտքում երկու դար, Գ և Դ դարերում, շարունակ Աստվածաշնչի կողքին առավելաբար Կիպրիանոսի գրվածքներն են ընթերցվել, որպես կանոնական, ուղղափառ գրականություն: Արևելքի Եկեղեցիներում էլ Կիպրիանոսի մատենագրական վաստակը նույն նշանակությունն է ունեցել, «շնորհիվ իրենց դյուրըմբռնելիության, սահուն լատիներենի, մանավանդ որ արտաքին հռետորական ձևն էլ պահված է եղել, իսկ ներքին ջերմությունն էլ՝ պակաս չէր»[20]:

Հիշենք Կիպրիանոսի գրվածքներից

1. Թուղթ առ Դոնատոս

Կիպրիանոսի հնագույն ճառ-թուղթն է՝ հասցեագրված իր բարեկամին: Այդ ճառում Կիպրիանոսը պատմում է նաև աստվածային այն շնորհի մասին, որը պատճառ է հանդիսացել իր քրիստոնյա դարձին, ազատելով իրեն հեթանոսական կյանքի ապականություններից, բռնություններից, գազանություններից, իր հոգևոր կուրության ճանապարհներից, անձնական իր մեղքերից, կրքերից ու սխալներից դեպի քրիստոնեական հավատքի լույսն ու խաղաղությունը, դեպի երջանկությունն ու փրկությունը:

Կիպրիանոսը, երբեմնի «փիլիսոփա հեթանոսը, քաջ ճարտասանը, քուրմն ու մոգը», խոստովանում է իր անցյալի մեղսալի կենցաղավարությունն ու մեղքերը՝ պատմելով միաժամանակ իր դարձի առթիվ աստվածային շնորհի ու փառքի մասին. «Ես յորժամ ի խաւարի և ի կոյր գիշերի անկեալ դնէի սկզբնաւորաբար» (Վարք ու վկայաբանութիւն):

Կիպրիանոսի սույն ճառը գրվել է նրա մկրտությունից անմիջապես հետո, 246 թվականին: Ճառի հիմնական նպատակն է եղել ոչ միայն պատմել իր դարձի մանրամասնությունների մասին, այլ հորդորել հեթանոս մտավորականներին, առնել նույն քայլը: Կիպրիանոսի և Օգոստինոսի «Խոստովանութիւն»-ների միջև մասնագետները բազում նմանություններ են գտնում:

2. Հանդերձ (զգեստ) կուսանաց

Կիպրիանոսի ճառերի մեջ սույն երկը կարևոր տեղ է գրավում:

Սույն ճառը գրվել է, երբ Կիպրիանոսը արդեն եպիսկոպոս էր Կարթագենա քաղաքի:

Սրբազան հեղինակի մտածումն է եղել իր քաղաքի կրոնական կյանքի և ընտանեկան կարգապահության բարելավումը, քաջալերել՝ հեթանոսական միջավայրում քրիստոնեական ընտանիքի սրբությունն ու մաքրությունը, ջատագովել ընդհանրապես կուսությունը, ի հակադրություն հեթանոսական բազմակնության և անբարոյականության: Կիպրիանոսի մտահոգությունն է որպես վերադիտող, այսինքն՝ եպիսկոպոս, Եկեղեցու ծոցում մաքուր պահել կուսական կյանքը աշխարհի փորձություններից: Նա կուսությունը համարում է «եկեղեցական սերնդի ծաղիկը, շնորհն ու զարդը հոգևոր կյանքի, երջանիկ մի հակում, փառքի և պատվի գեղեցիկ ու անապական մի գործ, Աստծու պատկերը համապատասխան՝ Տիրոջ սրբությանը, Քրիստոսի համայնքի ամենապայծառ մասը, Մայր Եկեղեցու փառավոր պտղաբերությունը և կենսունակությունը»:

Կիպրիանոսը կույսերին՝ որպես Քրիստոսի նվիրված հարսերի, զգուշացնում է հեթանոսական ունայնություններից և մոլորություններից: Քրիստոսի հարսերը պետք է պարզ հագնվեն, խուսափեն գոհարեղեն և ներկեր գործածելուց: Դրանք փորձիչի հրապուրանքներ են: Նրանք եթե նյութական հարստություններ ունեն, դրանք պետք է գործածեն բարի և մարդասիրական նպատակների համար, օգնեն աղքատներին, խեղճերին: Կիպրիանոսը իր ճառում կույսերին արգելում է մասնակցել հեթանոսական

---

[17] Quasten, նույնը, էջ 344:

[18] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 176:

[19] Լիակատար վարք և վկայաբանութիւն.... էջ 68 և 82:

[20] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 174:

աղմկարար հարսանիքների, չհաճախել՝ հասարակաց խառնակ լողարաններ, ապրել ժուժկալությամբ, մաքուր կենցաղավարությամբ և մտածել միայն երկնային այն վարձատրության մասին, որը սպասում է նրանց:

Կիպրիանոսի սույն ճառը գրվել է նրա եպիսկոպոս ձեռնադրվելուց անմիջապես հետո որպես Կարթագենայի Հայրապետ, 249 թվականին:

Սույն խրատական ճառում «խոսում է քրիստոնյա մեծ ուսուցիչն ու հայրը՝ իր համայնքի անդամներին»[21]:

Կիպրիանոսի սույն ճառը Օգոստինոսը իր գեղեցկության, իր ոճի և բովանդակության հարստության համար համարել է մի ընտիր նմուշ իր երիտասարդ քրիստոնյա քարոզիչների համար:

3. **Յաղագս անկելոց** (հավատքը ուրացողների մասին)

Կիպրիանոսը իր սույն կարևոր ճառը գրել է 251 թվականին, երբ վերադարձել է Կարթագենա, Դեկոս կայսրի հալածանքներից հետո:

Իր սույն ճառում Կիպրիանոսը նախ գոհություն է հայտնում Աստծուն, որ քրիստոնյաների դեմ հալածանքները վերջ են գտել, և Եկեղեցու ծոցում հաստատվել է խաղաղությունը: Նա խորունկ երախտագիտությամբ և հիացումով է նշում նահատակների քաջությունն ու համարձակությունը, որոնք հանուն քրիստոնեական հավատքի իրենց «արյան պատարագ»-ով հեթանոս աշխարհի առաջ ապացուցեցին նոր կրոնի վեհությունն ու գերազանցությունը:

Այնուհետև Կիպրիանոսը նշում է, որ ինքը ծանր հալածանքների ժամանակ երբեք չի լքել իր եպիսկոպոսական պաշտոնը, ժամանակավորապես հեռանալով Կարթագենայից: Այդ քայլը նա արել է հանուն Եկեղեցու և ի շահ հավատացյալների:

Բայց իր բացակայությանը սուտ եղբայրները թշնամաբար քաղաքում, լուրջ անկարգություններ են կատարել: Դաժան հալածանքների ժամանակ եղբայրներից ոմանք ուրացել և կազմել են մի հերձված, առանց բաժանվելու Եկեղեցուց, բայց բողոքելով նաև եպիսկոպոսների իշխանության դեմ:

Կարթագենայի ուղղափառ եպիսկոպոսները եկեղեցական հաղորդակցությունից արտաքսում են և՛ ուրացողներին, և՛ անառակներին:

Կարթագենայում և Հռոմում բողոքողներին միանում են նաև մի շարք երեցներ, լուրջ հարց դարձնելով ապաշխարության խնդիրը: Կիպրիանոսի վերադարձը Կարթագենա բորբոքում են վեճն ու հակառակությունը: «Զղջացող ուրացողները» հին սովորության համաձայն պահանջում էին կրկին վերադառնալ Եկեղեցու գիրկը, «նահատակների և խոստովանողների բարեխոսությամբ»:

Կիպրիանոսը հարմար է գտնում այս կարևոր հարցը լուծել եպիսկոպոսական մի ժողովում, հալածանքներից հետո, և հույս է տալիս զղջացողներին, որ նրանք կընդունվեն Եկեղեցու գիրկը, լուրջ ու կանոնավոր ապաշխարությունից և գործի մանրազնին քննությունից հետո միայն:

Եվ ահա այս առիթով էլ Կիպրիանոսը գրում է իր նշանավոր ճառը «Յաղագս անկելոց»-ը, ընդդեմ ուրացողների և ընդդեմ հերձվածողների:

Նա համարձակորեն դատապարտում է կատարված ուրացումներն ու պաշտոնական Եկեղեցու և եպիսկոպոսի իշխանության դեմ ապստամբությունները, և պահանջում է, որ բոլոր մեղավորները պետք է ծանր ապաշխարության ենթարկվեն: 251 թվականի մայիսին Կիպրիանոսը Կարթագենայում աֆրիկյան եպիսկոպոսների ժողով է հրավիրում, որտեղ ընթերցում է իր ճառը: Ժողովը միաձայնությամբ որոշում է Կիպրիանոսի ճառը համարել կանոնական, աֆրիկյան բոլոր եկեղեցիների համար:

Կիպրիանոսի «Յաղագս անկելոց» ճառը համարվում է մի նշանավոր աղբյուր թե՛ հալածանքների և թե՛ եկեղեցական կարգապահության պատմության համար, որի մեջ հաստատակամորեն և բնական եղանակով խոսվում է հավատքը ուրացողների դեմ կանոնական վերաբերմունք ճշտելու մասին[22]:

4. **Միութիւն Եկեղեցւոյ**

Կիպրիանոսի սույն ճառը գրվել է դարձյալ 251 թվականին, Նովատյան աղանդավորների դեմ, որոնք մանավանդ Հռոմում վտանգավոր պառակտում էին ստեղծել Եկեղեցում, և նրանց հետևորդները Կարթագենայում կատարում էին նույն դատապարտելի ոտնձգությունները տեղի Եկեղեցու և եպիսկոպոսի դեմ:

Իր սույն ճառում Կիպրիանոսը նշում է, որ հերետիկոսներն ու հերձվածողները սատանայի գործակալներն են: Պետք է զգուշանալ նրանցից: Տարբերություն չի դրվում հերետիկոսության և հերձվածողության միջև: Այդ երկուսը ավելի վտանգավոր են Ե-

[21] Quasten, նույնը, էջ 348:

[22] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 176:

կեղեցու համար, քան հալածանքները: Դրանք վտանգում են Եկեղեցու միությունը, կործանում են հավատքը, նենգափոխում ճշմարտությունը: Դրանք ապականում են Տիրոջ Այգին՝ Եկեղեցին, լարում են միմյանց դեմ հավատացյալներին: Չկա փրկություն Եկեղեցուց դուրս: Ամեն հավատացյալ պարտավոր է մնալ Եկեղեցու ծոցում: Եկեղեցին Նոյի փրկության տապանն է: Եկեղեցուց դուրս մնացող հերետիկոսն ու հերձվածողը չեն կարող նույնիսկ մարտիրոս և խոստովանող լինել: Հերետիկոսությունը չի ջնջվի, չի սրբվի նույնիսկ մարտիրոսական արյունով: Հերետիկոսները, հավատքը նենգափոխողները, սուտ քարոզիչները ավելի վտանգավոր են Եկեղեցու համար, քան ուրացողները:

Նովատյան աղանդավորական վեճերի հետ է կապված նաև աղանդավորների կրկնամկրտության հարցը: Նրանք կրկին էին մկրտում ուղղափառ Եկեղեցուց եկած մկրտվածներին, անվավեր համարելով նրանց նախկին մկրտությունը:

Կիպրիանոսի «Միութիւն Եկեղեցւոյ» ճառը համարվում է «եկեղեցական քաղաքականության վերաբերյալ ամենանշանավոր աշխատությունը, որի մեջ հեղինակը նշում է հերձվածողության վտանգավորությունը և թելադրում է հեռու կենալ նրանից»[23]:

Եկեղեցական ջատագովներն ու հայրերը իրենց գրվածքներում հերետիկոսությունն ու հերձվածողությունը ավելի վտանգավոր են համարել Եկեղեցու համար, քան պետական հալածանքները, ցույց տալով միաժամանակ դրանց գաղափարախոսական կապը հեթանոսական փիլիսոփայության հետ, որովհետև դրանք վտանգում էին եկեղեցական միությունը, հավատացյալների ի Քրիստոս եղբայրությունը, կործանում էին հավատքը և նենգափոխում ճշմարտությունն ու աստվածային հայտնությունը:

5. Կիպրիանոսի նամականին

Եկեղեցական մատենագրության հնագույն սիրված ու կարևոր ժանրը եղել է նաև նամականին կամ թուղթը, ըստ առաքելական սովորության:

Կիպրիանոսն էլ թողել է հարուստ ու արժեքավոր նամակագրական վաստակ, որը համարվում է ամենակարևոր աղբյուրը Եկեղեցու պատմության այդ շրջանի մասին և մանավանդ Գ դարի առաջին հիսնամյակի համար: Բոլոր նամակները վերաբերվում են եկեղեցական, գործնական խնդիրների:

Կիպրիանոսը նամակագրական կապի մեջ է եղել եկեղեցական բազում հարցերով, իր ժամանակ աչքի ընկնող եկեղեցական մեծ հայրերի, այդ թվում՝ Հռոմի Կորնելիոս (251—253), Ստեփանոս (254—257) և կապադովկյան Կեսարիայի Ֆիրմիլիանոս Հայրապետների և նույնիսկ հերետիկոսապետների հետ:

Կիպրիանոսի նամականին հայելին է իր ժամանակի եկեղեցական խնդիրների, որոնք հուզել են ոչ միայն Հյուսիսային Աֆրիկայի Եկեղեցին, այլ նաև Եգիպտոսի, Անտիոքի, Ասորիքի, Կապադովկիայի, Փոքր Ասիայի և Հռոմի Եկեղեցիներին:

Կիպրիանոսից մեզ հասել են ավելի քան 80 նամակներ, տարբեր բովանդակությամբ, որոնցում նա խոսել է բազում քրիստոնյաների կյանքի և նահատակության, Եկեղեցու ապագայի համար իր հույսերի և վախերի մասին: Վերոհիշյալ նամակներից 65-ը ուղղվել են քրիստոնեական մեծ կենտրոնների և պաշտոնակից եպիսկոպոսների, իսկ մնացած 15 նամակները իրեն ուղղված նամակներ են:

Կիպրիանոսի նամականին համարվում է ոչ միայն «կարևոր աղբյուր Եկեղեցու պատմության և կանոնական իրավունքի համար, այլ նաև նշանավոր հուշարձան լատին քրիստոնեության... Նրա ճառերն ու նամակները վկայում են եկեղեցական գրողի և հռետորական արվեստի նախկին պրոֆեսորի պայծառ ոճի մասին, մի մարդու, որը ծանոթ է կիկերոնյան ոճին»[24]:

Կիպրիանոսի մատենագրական ողջ վաստակի և նրա աստվածաբանության առանձնահատկությունների մասին տես Quasten, նույնը, էջ 344—382:

ԿԻՊՐԻԱՆՈՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կիպրիանոսի ճառերի հատվածներ կան հայերեն թարգմանությամբ «յուրբաթագիրս կամ ի ժողովածու քարոզգիրքս և աղօթաձև գրապանակս» (Վարք և վկայաբանութիւն, էջ 102):

Կիպրիանոսի մատենագրական վաստակի հայերեն թարգմանության ժամանակի մասին կարելի չէ որոշ բան ասել: Կան միայն վկայություններ.

Այսպես՝

1. Կիպրիանոսի... Ճառ ողորմութեան: Կիպրիանոսը նումիդիական գերված քրիստոնյաների ազատության համար, ըստ վե-

[23] Նույնը, էջ 176:

[24] Quasten, նույնը, էջ 366:

ռոհիշյալ ճառի վկայության, մեծ փրկագին է վճարել հորենական իր ժառանգներից, ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության. Եկեղեցոյ պատմութիւն, դպրութիւն Է, էջ 5:

2. Կիպրիանոսի եպիսկոպոսի ասէ յողորմութեան ճառէն. «Քանզի բաղարջ հացի և անապական գինով հաղորդեցաւ մեզ սուրբ խորհուրդն»:

3. Սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի Ափրիկեցոյ Քարտագեն քաղաքի դիտողի և վկայի, յորմէ որ յաղագս ողորմութեան ճառէն. «Բազում և մեծամեծք են, եղբարք սիրելիք, աստուծայինքն բարեգործութիւնք, յորոց զմերս փրկութիւն՝ Աստուծոյ Հայր և Քրիստոսի առատ և հարուստ մարդասիրութիւնն գործեաց և միշտ գործէ»[25]:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» հայերեն թարգմանության և հրատարակության մեջ կան երկու հատվածներ նույն «ի մեկնութենէն որ յաղագս ողորմութեան» ճառից, որ հետևյալն է.

«Յոքունք և մեծամեծք պատահեցին, սիրելի՛ք եղբարք, աստուածային բարեգործութիւնք, յորոց զմեր փրկութիւն Աստուծոյն Հայր առատ և փարթամ մարդասիրութիւնն գործեաց և միշտ գործեսցէ. վասն որոյ պահել զմեզ և կենսագործել Հայրն զՈրդին առաքեաց, զի զմեզ նորոգես(ցէ) առաքեցեալ Որդին, կամեցեալ որդի մարդոյ լինել, իբր զի զմեզ Որդիս Աստուծոյ կացուցէ: Նուաստացոյց այսուհետև զինքն, զի զժողովուրդս զբացընկեցիկն վերստին ստասցի. վիրաւորեցաւ, զի զմերսն վէրսն բժշկեսցէ. ծառայեաց որպէս (զի) ի ծառայութենէ յազատութիւն զծառայեալսն նմա ածցէ. մահ յանձն էառ, զի մահկանացուաց զանմահութիւնն հատուցէ»: Եվ էջ 117—118, նույնը:

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Ցուցակ Զեռագրաց Ա հատորում հիշվում են հատվածներ Կիպրիանոսի ճառերի հայերեն թարգմանություններից:

Վկայութիւնք ի Կիպրիանոսէ յաղագս ողորմածութեան. Ապաշխարութիւն Կիպրիանոսի, ճառք, խրատ Կիպրիանոսի, Հմայիլ[26]:

Նույն աշխատության երկրորդ հատորում կան Կիպրիանոսի ճառերի և աղոթքների հայերեն թարգմանության հետևյալ հատվածները, աղոթք, խրատ, քարոզ, յաղագս բժշկութեան, յողորմութեան ճառէն[27]:

Կիպրիանոսի մատենագրական վաստակից հայերեն տպագրված են.

«Գիրք Աղօթից, վասն ամենայն ցեղ պատահարաց», Կ. Պոլիս, 1798:

Կան նույն գրքի այլ հրատարակություններ, ինչպիսիք են.

Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ պատահարաց, որք գան ի վերայ մարդոյն, որոց ազատեսցէ զմեզ Աստուած, ամէն. 135 էջ:

Ապա

Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ պատահարաց... տպագրութեամբ ի լոյս ածեալ՝ հրամանաւ տեառն Յովաննու աստուածաբան Պատրիարքի, Կ. Պոլսոյ, 96 էջ:

Սույն աղոթագիրքը ունեցել է հաջորդաբար երեք այլ հրատարակություններ[28]:

1846 թվականին Վիեննայում Մխիթարյան հայրերի վանքում հրատարակվել է Կիպրիանոս Հայրապետի մի այլ աշխատություն, հետևյալ վերնագրով. «Սրբոյն Կիպրիանոս Կարքեդոնացւոց եպիսկոպոսի գիրք վասն միութեան Եկեղեցւոյ, 24 էջ[29]:

1922-ին դարձյալ Վիեննայում հրատարակվել է «Վկայութիւն Ս. Կիպրիանոսի» մատենագրական հետազոտություններ, քննություն բնագրի, հատոր Ա:

Հայերեն ձեռագրերում կա նաև Կիպրիանոսի «Վարք»-ը[30]:

Կիպրիանոսի մատենագրական վաստակի ամենասիրված երկը հայ հավատացյալի համար նրա աղոթագիրքն է: Նրա «համբավը իբրև հրաշագործ սուրբ, առնը-վազն մեր մեջ, կհիմնվի իր անունով ծանոթ աղոթագրքին վրա, որ Երուսաղեմի գրատունեն ամենեն շատ սպառում ունեցած գրքույկն է: Այս աղոթագիրքին սկիզբը դրված է Աստուծո ավելի քան 400 անուն (ստորագելիները) որոնք իրարու ետևեն կթվվին ըսելու համար անոր վերջավորության. «Քու սուրբ և անեղ անվանցդ զորությամբ, եղիցիս պահապան ծառայիս»[31]:

---

25 Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 502:

26 Ցուցակ Զեռագրաց, Ա հատոր, Երևան, 1944, տես Կիպրիանոս:

27 Ցուցակ, Բ հատոր, 1970, Կիպրիանոս:

28 Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800): Երևան, 1963, էջ 223, 230—232:

29 Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 335:

30 Լիակատար վարք և վկայաբանութիւն..., նույնը, էջ 103:

31 **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 46: